



## Մարդը կիմանա ինչ օդ է շնչում

**Հայաստանում ներդրվում է շրջակա միջավայրի միասնական մոնիթորինգի համակարգ: Շրջակա միջավայրի պետական միասնական մոնիթորինգի համակարգի շնորհիվ շրջակա միջավայրի աղտոտվածության մասին հանրությունը կտեղեկանա սեղմ ժամանակում:**

«Համակարգված մոնիթորինգի արդյունքում խնդիրները կդառնան տեսանելի, կսահմանվեն գերակա խնդիրները և դրանց կտրվեն համապատասխան լուծումներ», «Արմենպրես»-ի հետ զրույցում «Շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի զարգացման» ծրագրի մասին խոսեց ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի մոնիտորինգի և տեղեկատվության կենտրոն»-ի փոխտնօրեն Գայանե Շահնազարյանը:

«Չնայած Հայաստանում տարբեր գերատեսչությունների կողմից իրականացվում է շրջակա միջավայրի մոնիթորինգ, սակայն չկա մոնիթորինգի մեկ համակարգված մոտեցում և դրանից ստացվող ընդհանրական տեղեկատվություն, որը հասանելի կլինի հասարակությանը: Օրինակ, ՀՀ-ում տարբեր գերատեսչությունների կողմից՝ այդ թվում նաև ՀՀ բնապահպանության նախարարության կողմից, մշակվում և իրականացվում են շրջակա միջավայրի տարբեր բաղադրիչների մոնիթորինգ, սա-

կայն ստացված մոնիթորինգի տեղեկատվությունը շատ դեպքերում բավարար չի լինում գնահատելու էկոհամակարգի վիճակը կամ նրա վրա ազդեցության չափը շրջակա միջավայրի որևէ բաղադրիչի մոնիթորինգի չիրականացման պատճառով: Արդյունքում հանրությանը և իշխանությանը չենք կարողանում ընդհանրական տեղեկատվություն տալ այդ տարածաշրջանի էկոլոգիական վիճակի մասին: Ուստի նպատակ դրվեց նախ և առաջ վերհանել բոլոր բացերը: Մենք այդ գործընթացը սկսել ենք հայեցակարգի մշակումով: Հայեցակարգի ընդունումից հետո հաջորդ քայլը կլինի դրանից բխող միջոցառումների իրականացումը, որը հետևողականորեն կբերի մոնիթորինգի խնդիրները լուծմանը, շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի և տեղեկատվության կառավարման ազգային հզորությունների զարգացմանը՝ ապահովելով առավել արդյունավետ բնապահպանական քաղաքականության մշակումը և հանրության իրազեկելիության աստիճանի մեծացումը», - ասաց Շահնազարյանն ու հավելեց, որ ուզում են կանոնակարգել համակարգը, համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին: Ներկայում հանրությունը շրջակա միջավայրի տվյալ պահի իրավիճակի մասին կարող է տեղեկանալ նվազագույնը մեկ ամիս անց:

Հարունակությունը՝ էջ 2 /

• Մարդը կիմանա ինչ օդ է շնչում

Սկիզբը էջ 1 /

Այսինքն՝ մարդն իր շնչած օդի ինչպիսին լինելու մասին տեղեկանում է միայն մեկ ամիս հետո: Սակայն հայեցակարգից բխող պետական միասնական մոնիթորինգի համակարգը հնարավորություն կտա ստեղծել համապատասխան ֆինանսական մեխանիզմներ մոնիթորինգի համակարգի կատարելագործման, առկա բացերը (մեթոդական, տեխնիկական և մասնագիտական) լրացնելու նպատակով՝ նոր տեխնոլոգիաների և միջազգային չափանիշներին համապատասխան տեղեկատվության հասանելիության մեծացում և մատչելիություն: «Այսինքն հնարավոր է, որ մթնոլորտային օդի աղտոտվածության մասին տեղեկությունը մարդիկ ստանան բջջային հավելվածների միջոցով՝ այնպես, ինչպես տեղեկանում են եղանակի մասին», -նշեց Շահնազարյանը: Հաճախ խնդիրները հստակ չձևակերպված լինելու պատճառով է, որ լուծում չեն ստանում: Մասնագետի խոսքով՝ եթե հայեցակարգից բխող միջոցառումներով վերհանվեն խնդիրները, դրանց լուծման համար կգտնվեն նաև դոնորներ: Հայեցակարգով մթնոլորտային օդի, մակերևութային և ստորերկյա ջրերի էկոհամարգերի, ջրային ռե-

սուրսների որակական ու քանակական հատկությունների, հողերի որակի, որակական փոփոխությունների և շատ այլ մոնիթորինգներ կիրականացվեն պետական մոնիթորինգի շրջանակում: Շրջակա միջավայրի մոնիթորինգի վերջին հայեցակարգը մշակվել էր 2006թ.-ին, համար, իսկ Հայաստանի Հանրապետության ակտիվ ներգրավումը շրջակա միջավայրի պահպանության բնագավառում համաշխարհային գործընթացներին պահանջում է ուշադրության կենտրոնում պահել շրջակա միջավայրի մոնիթորինգի գործընթացն՝ ապահովելով ազգային և միջազգային շրջանակներում գործադրվող ջանքերի ներդաշնակեցումն ու համակարգումը: Նոր հայեցակարգը ՀՀ կառավարությանն է ներկայացվել 2017-ի դեկտեմբերին: Ներկայումս, գտնվում է կառավարությունում և մոտ օրերս կորվի քննարկման: Շրջակա միջավայրի մոնիթորինգի հայեցակարգի մշակման անհրաժեշտությունը բխում է կառավարության գերակա խնդիրներից և սահմանված է կառավարության 2018-2022 թթ. ծրագրով:

Աննա Գրիգորյան



Այլընտրանք, թե՛ դարձադրամ

խորհրդարանական լսումներ «Գեներտիկորեն ձևափոխված օրգանիզմների ազդեցությունը» թեմայով



**ՀՀ** Աժ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ հունվարի 26-ին տեղի են ունեցել «Գեներտիկորեն ձևափոխված օրգանիզմներ՝ այլընտրանք, թե՛ պարտադրանք» թեմայով խորհրդարանական լսումներ, որին մասնակցել են ՀՀ Աժ պատգամավորներ, կառավարության անդամներ, միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, գիտնականներ, ոլորտի պատասխանատուներ:

Բացման խոսքում հանձնաժողովի նախագահ Վարդևան Գրիգորյանը նշել է, որ նախորդ գումարման Ազգային ժողովը քննարկել է «Գեներտիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածության կենսամոլտանգության մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որն առաջին ընթերցմամբ ընդունվել է, սակայն հետո կառավարության կողմից հետ է վերցվել: Նրա խոսքով՝ խնդիրը կրկին արդիական է դարձել ամերիկյան «Մոնսանտո» ընկերության գործունեության, ինչպես նաև հասարակության կոմերցիոն և գիտական շրջանակներում հակասական տրամադրությունների պատճառով:

Վ. Գրիգորյանի գնահատմամբ՝ խորհրդարանական լսումների նպատակն է քննարկել բոլոր շահագրգիռ կողմերի առաջարկներն ու դիտողությունները:

Գյուղատնտեսության նախարարի տեղակալ Աշոտ Հարությունյանը հիմնական զեկույցում տվյալներ է ներկայացրել «Մոնսանտո» ընկերության գործունեության վերաբերյալ՝ նշելով, որ այն բանջարաբուստանային մշակաբույսերի քիչ քանակությամբ սերմեր է ներմուծում մեր երկիր. 2017 թվականի տվյալներով շուրջ 125 կգ: Փոխնախարարը տեղեկացրել է, որ Հայաստանում սերմերի շուկան ազատականացված է, չկա որևէ օրենսդրական ակտ, որը կարգելի գեներտիկորեն ձևափոխված օրգանիզմների սերմերի ներմուծումը: 2006 թվականին ընդունվել է «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենք, որը, անմիջականորեն առնչվելով ոլորտին, սահմանում է Հայաստանում իրացվող սննդամթերքի, դրա հետ շփվող նյութերի ու ակտիվ հավելումների անվտանգությանը, մակնշմանը, փաթեթավորմանը ներկայացվող ամհրաժեշտ պահանջներ: Ըստ այդ օրենքի՝ հայերենով պետք է լինի նաև ԳԶՕ-ի վերաբերյալ նշումը, եթե սննդամթերքի բաղադրության մեջ դրա պարունակությունը 0.9 տոկոսից բարձր է:

Աշոտ Հարությունյանը ներկայացրել է ԳԶՕ-ների ուղղությամբ նախարարության իրականացրած միջոցառումներն ու քայլերը: Գյուղատնտեսության, Առողջապահության և Բնապահպանության նախարարությունների պատասխանատուների, ՀԿ ներկայացուցիչների, գիտնականների մասնակցությամբ ստեղծվել է հանձնաժողով՝ ԳԶՕ-ների կիրառման անվտանգ վերահսկողության կարգավորման հետ կապված հարցերը քննարկելու նպատակով: Բանախոսը տեղեկացրել է նաև, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության համապատասխան վարչություններին հանձնարարվել է միջգերատեսչական հանձնաժողովի առաջարկների հիման վրա ստեղծել նախագծի աշխատանքային տարբերակ, որը կներկայացվի հանրությանը և լայնորեն կքննարկվի:

Բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը, ներկայացնելով ոլորտում Հայաստանում վավերացրած պայմանագրերը, անդրադարձել է նաև նախորդ գումարման խորհրդարանում առաջին ընթերցմամբ ընդունված «Գեներտիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածության կենսամոլտանգության մասին» նախագծի քննարկման ընթացակարգին: Փոխնախարարը նշել է, որ օրենսդրական կարգավորման հարցում գաղափարական մոտեցումը չի փոխվել, սակայն պետք է ուսումնասիրվեն ԵԱՏՄ ու ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ստորագրումից բխող պարտավորությունները: Նշվել է, որ մշակվող նախագծով կարգավորվում է Հայաստանի Հանրապետությունում ԳԶՕ-ների ստացման, փորձարկման, բազմացման, պահման, ոչնչացման կամ վնասագրեթման, ներառյալ արտահանման, ներմուծման և անդրսահմանային տեղափոխության հետ կապված հնարավոր անբարենպաստ ազդեցությունից շրջակա միջավայրի և կենսաբազմազանության պահպանությանը, կենսամոլտանգությանն առնչվող հարաբերությունները՝ հաշվի առնելով մարդու առողջությանը սպառնացող վտանգները: Առողջապահության նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության պետի պաշտոնակատար Դավիթ Մելիք-Նուբարյանն անդրադարձել է մարդու առողջության վրա ԳԶՕ-ների հնարավոր ազդեցությանը և դրա կառավարմանն ուղղված միջազգային մոտեցումներին:



• Այլընտրանք, թե՞ դարձադրամ.

խորհրդարանական լսումներ «Գեներտիկորեն ձևափոխված օրգանիզմների ազդեցությունը» թեմայով

Սկիզբը էջ 31

Նա ներկայացրել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալները ԳՁՕ-ներով սննդամթերքի օգտագործման ռիսկերի վերաբերյալ:

Ձեկուցողը փաստել է, որ այս պահի դրությամբ Առողջապահության մախարարությունը չունի փաստեր, որ Հայաստանում ԳՁՕ-ների կիրառման հետևանքով առաջացել են առողջական խնդիրներ: Բանախոսը կարևորել է ԳՁՕ-ներ պարունակող սննդամթերքի վերաբերյալ պիտակավորման պարտադիր լինելը, ինչպես նաև դրա արտահանման ու ներմուծման դեպքում ստուգման փաստաթղթերի առկայությունը: Հիմնական զեկուցողներին ուղղված հարցերը, ինչպես նաև ոլորտի պատասխանատուների ելույթները վերաբերել են մարդու օրգանիզմի վրա գեներտիկորեն ձևափոխված օրգանիզմներ պարունակող սննդամթերքի ազդեցությանը, օգտագործման ռիսկերին, այլ երկրներում դրանց կարգավորմանը, արտադրող երկրներում սպառման ու արտահանման վիճակագրությանը,

սպառողների շահերի պաշտպանությանը, այդ մթերքների իրացման հարցում գնային քաղաքականությանը, Հայաստանում այդ բույսերի մշակման ծավալներին: Առաջարկվեց ուսումնասիրել այն երկրների փորձը, ուր արգելվում է դրանց ներմուծումն ու արտադրությունը: Հանձնաժողովի մախագահի տեղակալ Արայիկ Հովհաննիսյանը, նշել է, որ լսումների նպատակն էր հասկանալ մեր երկրում այս ոլորտում գործող ընթացակարգերը: Նա կարևորել է միջազգային փորձի համադրումը Հայաստանի ունեցած հնարավորություններին: Արայիկ Հովհաննիսյանը կարևորել է միջգերատեսչական հանձնաժողովի գործունեությունը: Եզրափակիչ ելույթում հանձնաժողովի մախագահ Վարդևան Գրիգորյանը հավաստիացրել է, որ հանձնաժողովը հետևողական կլինի հետագա աշխատանքներում՝ հաշվի առնելով, որ քննարկվող հարցը հանրությանն ու հատկապես սպառողների շահերին է վերաբերում:

Հանձնարարվել է Արփի լճի ջրային սարածֆներում արգելել սիրողական որսն ու ձկնորսությունը, և իհարկե ուժեղացնել հսկողությունը

Նախարար Արծվիկ Մինասյանը հանձնարարական է ստորագրել, որով մինչև 2018 թվականի հունվարի 31-ն արգելել է ՀՀ Շիրակի մարզի Արփի լճի ջրային տարածքներում սիրողական որսը և ձկնորսությունը իրականացնելու համար պայմանագրերի կնքումը: «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Ալեքյանին հանձնարարվել է ջրային տարածքներում ուժեղացնել հսկողությունը՝ ապօրինի որսը և ձկնորսությունը կանխելու նպատակով: Ազգային պարկի ղեկավարությանը հանձնարարվել է հունվարի 29-ին ներկայացնել զեկուցագիր՝ «Արփի լիճ» ազգային պարկ»-ի ջրային տարածքներում որս և ձկնորսություն իրականացնելու հետագա հնարավորության և դրա գիտական հիմնավորումների վերաբերյալ:



Անասնաբույժին, ցավոք, չհաջողվեց փրկել այծյամի կյանքը



Հունվարի 31-ին «Ձանգեզուր» կենսոլորտային համալիրի» «Շիկահող» արգելոցի տեղամասի տեսուչը պլանային շրջայցի ժամանակ արձանագրել է գայլերի ոհմակի հարձակումն եվրոպական այծյամի վրա: Տեսուչի և վերջինիս ուղեկցող շան մոտենալուն պես գայլերը փախել են: Կենսոլորտային համալիրի աշխատակիցները վիրավոր կենդանուն, որի վերքերը՝ տեղում արտաքին զննությամբ խորը չեն թվացել, տեղափոխել են գրասենյակի տարածք: Անասնաբույժի միջամտությամբ առաջին բուժօգնություն է ցուցաբերվել, սակայն ստացված վնասվածքներն անհամատեղելի են եղել կենդանու կյանքի հետ և կարճ ժամանակ անց այծյամը, ցավոք, սատկել է: Փաստի մասին տեղեկացվել է Բնապահպանության մախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Սյունիքի տարածքային բաժնի աշխատակիցներին: Սահմանված կարգով դեպքի վերաբերյալ կազմվել է արձանագրություն:



## Ի գիտություն բնապահպանական և բնօգտագործման վճար վճարող ճնշասավարող սուբյեկտների



**ՀՀ** բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը տեղեկացնում է, որ բնապահպանական և բնօգտագործման վճար վճարող հանդիսացող տնտեսավարող սուբյեկտները բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվետվությունների (հարկային հաշվարկներ) էլեկտրոնային համակարգ մուտքագրման կարգի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կարող են զանգահարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի «Թեժ գիծ»՝ **060 544 444** հեռախոսահամարով:

## Գնառաջարկի ներկայացման Հրավեր

«Հանրային կադերի և հաղորդակցության գործողությունների իրականացում՝ հանրադատական հեռարձակում ունեցող հայաստանյան հեռուստաընկերության միջոցով» խորհրդասվական ծառայության համար

«Պահպանվող Տարածքների Աջակցման Ծրագիր-Հայաստան» (ՊՏԱԾ-Հ) ծրագրի իրականացման գրասենյակը Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության անունից հրավիրում է հետաքրքրված կազմակերպություններին՝ մասնակցելու «Հանրային կապերի և հաղորդակցության գործողությունների իրականացում՝ հանրապետական հեռարձակում ունեցող հայաստանյան հեռուստաընկերության միջոցով» խորհրդատվական ծառայության իրականացման համար գնառաջարկի մրցութային փաթեթի ներկայացման նպատակով հայտարարվող մրցութին:

**Ծրագիր՝** «Պահպանվող Տարածքների Աջակցման Ծրագիր-Հայաստան» (ՊՏԱԾ-Հ)  
**Հղում No՝** BMZ-N 2009.6657.2

**Ֆինանսավորում՝** KfW Ջարգացման բանկ (KfW), Գերմանիա

**Պատվիրատու՝** ՊՏԱԾ-Հ ԾԻԳ-ը՝ ՀՀ բնապահպանության նախարարության (Ծրագրի իրականացման գործադիր մարմին) և ԳԻՏԵՔ խորհրդատվական ընկերության անունից

**Պայմանագիր՝** խորհրդատվական ծառայության ձեռքբերում

Հայտի ներկայացման ընթացակարգ՝ KfW գնումների ընթացակարգ, ազգային մրցույթ

**Մրցույթի Ծածկագիր՝** SPPA /ARMENIA/CS/2018-1

**Ծառայության անվանումը՝** Հանրային կապերի և հաղորդակցության գործողությունների իրականացում՝ հանրապետական հեռարձակում ունեցող հայաստանյան հեռուստաընկերության միջոցով

**Հայտարարության սկիզբ՝** Հունվարի 17, 2018

**Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ՝** Փետրվարի 09, 2018

**Հայտերը ներկայացնելու հասցե՝** ՀՀ, Կառավարության 3-րդ շենք, 5-րդ հարկ, սենյակ N 544

**Հայտի փաթեթի լեզու՝** Անգլերեն

**Խորհրդատվական կազմակերպությանը ներկայացվող պահանջները՝**

1. Հայաստանում առնվազն 5 տարվա հանրապետական հեռարձակման փորձ
2. Պահպանվող տարածքների, բնական ռեսուրսների, բնապահպանության, համայնքային զարգացման և բնական ռեսուրսների կայուն օգտագործման մասին 5 հաղորդաչափերի պատրաստման և հանրապետական հեռարձակման փորձ:
3. Սույն առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ/նմանատիպ փորձառությամբ անձնակազմի առնվազն 3 անդամի առկայություն:
4. Սյունիքի մարզի մասին հաղորդաչափերի հեռարձակման փորձ:
5. Միջազգային կառույցների հետ առնվազն 5 ծրագրերի իրականացման փորձ վերջին 5 տարվա ընթացքում:
6. Հանդիչ ապացույց համապատասխան տեխնիկական սարքավորումների առկայության մասին, որոնք անհրաժեշտ են սույն առաջադրանքի իրականացման համար:

Լրացուցիչ տեղեկությունների համար գրել ՊՏԱԾ-Հ ծրագրի Գնումների մասնագետ/հաշվապահ Մարինա Բաբայանին՝ հետևյալ էլ-փոստի հասցեով. [m.babayan@consecord.am](mailto:m.babayan@consecord.am) Գնառաջարկի ներկայացման փաթեթի մասին առավել մանրամասն տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայք էջում [www.mop.am](http://www.mop.am)՝ ներբեռնելով այն այստեղ: «Պահպանվող Տարածքների Աջակցման Ծրագիր-Հայաստան» (ՊՏԱԾ-Հ) ծրագիրը մաս է կազմում Գերմանիայի Դաշնային Հանրապետության Տնտեսական Համագործակցության և Ջարգացման Նախարարության կողմից (BMZ No: 2009.6657.2) մեկնարկված Կովկասյան նախաձեռնության: Սույն ծրագիրը իրականացվում է համաձայն Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև կնքված միջկառավարական համաձայնագրի, ինչպես նաև KfW բանկի և ՀՀ Բնապահպանության նախարարության միջև 28.05.2013թ-ին ստորագրված Հատուկ Համաձայնագրի միջոցով:

# Վնասարարները չեն բնում, այս անգամ էլ շրջակա միջավայրին հասցված վնասը կազմել է շուրջ 4 մլն. դրամ



**ՀՀ** բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ստորաբաժանումների աշխատակիցների կողմից ս.թ. հունվարի 22-ից 26-ն ընկած ժամանակահատվածում կատարված ստուգումների, շրջայցերի, Տեսչական մարմնին հանձնված վարչական վարույթի քննության, ինչպես նաև եռամսյակային հաշվետվությունների ընդունման գործընթացում հայտնաբերվել է արձանագրվել է թվով 19 իրավախախտում, 4-ի վերաբերյալ անցկացվել է վարչական վարույթի քննություն և նշանակվել 300.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:

Վերոնշյալ ժամանակահատվածում բնապահպանական իրավախախտումների հետևանքով շրջակա միջավայրին հասցված վնասի չափը կազմել է՝ 4.038.700 ՀՀ դրամ: Մասնավորապես՝

### Բուսական աշխարհի պահպանության ոլորտ

Արձանագրվել է իրավախախտման 13 դեպք: Քննված վարչական վարույթներով հաշվարկվել է 1.038.700 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս, որից՝ Տավուշ՝ ապօրինի ծառահատման 9 դեպքով (2 թեղի, 8 բոխի, 7 հաճարենի, 5 կաղնի, 2 դաժի) հաշվարկվել է 646.500 ՀՀ դրամի չափով, որից 2 դեպքի վերաբերյալ հաղորդում է ներկայացվել իրավապահ մարմիններին, իսկ 1-ը՝ ընթացքի մեջ է: Վառելափայտի ապօրինի տեղափոխման 2 դեպքով (7,2 խմ թափուկ վառելափայտ և 0,6 խմ տախտակ) հաշվարկվել է 66.000 ՀՀ դրամի չափով:

Սյունիք՝ ապօրինի ծառահատման 1 դեպքով (5 բոխի, 2 կաղնի) հաշվարկվել է 283.000 ՀՀ դրամի չափով: Վայոց Ձոր՝ վառելափայտի ապօրինի տեղափոխման 1 դեպքով (1,2 խմ) հաշվարկվել է 43.200 ՀՀ դրամի չափով:

### Կենդանական աշխարհի պահպանության ոլորտ

Արձանագրվել է իրավախախտման 3 դեպք: Քննված վարչական վարույթներով նշանակվել է 150.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, հաշվարկվել 3.000.000 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս՝

Սյունիք՝ բեզդարյան այծի ապօրինի որսի 1 դեպքով հաշվարկվել է 3.000.000 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս, որսամիսը (28կգ) հանձնվել է «Առաքելություն Հայաստան» Արծվաբույն SU կազմակերպությանը:

Կոտայք՝ ձկան ապօրինի վաճառքի 1 դեպք (առգրավվել է 15 հատ՝ 7 կգ սիգ տեսակի ձուկ, հանձնվել է Արևիկյան քաղաքի «Նարեկ» ծերանոց):

Արարատ՝ որսի իրականացման կանոնների խախտման 1 դեպքով նշանակվել է 150.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:

### Մթնոլորտային օդի և ջրերի պահպանության, թափոնների տեղաբաշխման, հողերի օգտագործման և պահպանման ոլորտ

Արձանագրվել է իրավախախտման 3 դեպք: Քննված վարչական վարույթներով նշանակվել է 150.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, որից

Երևան՝ առանց անթափանց ծածկոցի շինարարական աղբի տեղափոխման 1 դեպքով նշանակվել է վարչական տուգանք՝ 50.000 ՀՀ դրամի չափով:

Շիրակ՝ առանց շրջակա միջավայրի ազդեցության դրական եզրակացության գործունեություն իրականացնելու 1 դեպքով նշանակվել է 50.000 ՀՀ դրամի չափով:

Արագածոտն՝ առանց անթափանց ծածկոցի ստրուն նյութերի տեղափոխման 1 դեպքով նշանակվել է վարչական տուգանք՝ 50.000 ՀՀ դրամի չափով:

Ընդհանուր առմամբ ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի պատժամիջոցներից հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 936.500 ՀՀ դրամ:

## Որսագողը դիմել է փախուստի

Հունվարի 24-ին, ժամը 9:30-ին ՀՀ ԲՆ «Ձանգեզուր» կենսոլորտային համալիր ՊՈԱԿ-ի «Ձանգեզուր» պետական արգելավայր տեղամասի տեսուչ Ա. Ստեփանյանն ահազանգել է տնօրինությանը, որ Աջաբաջ բնակավայրի հարակից տարածքում կրակոցի ծայր է լսվում: Տնօրենի հանձնարարությամբ այդ տարածք են մեկնել վեց աշխատակիցներ: Տեղյակ է պահվել նաև Բնապահպանության և ընդերքի տեսչության մարմնի մարզային կառույցին: Տարածքը սանրելուց հետո ՊՈԱԿ-ի աշխատակիցները ժամը 12:00-ին հայտնաբերել են սպանված



մեկ բեզդարյան այծ, որին չէին հասցրել մորթագերծել: Որսագողին հայտնաբերելու ջանքերն արդյունք չեն տվել: Կատարվածի մասին տեղյակ է պահվել իրավապահ մարմիններին:



**Ելանորա Գրիգորյան**

**ուլորտից սիրով և ամանացող ծառայող մտավորականը**



Պատվոգրի ստեղծագործություններ, կենսագրի գրառումներ  
 Է. Գ. ԳՐԻԳՐՅԱՆԻ ԱՆՄԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՒԱՐԱՐՈՒՅՄԱՆ ԱՄՍՈՎ  
 «Մեր հասցի է՝ 2005 թվականի օգոստոսի 2-ին, հասցանք՝ Կենսագրության և  
 մասնագրության 59-րդ հոկտեմբերի 19-րդ կառույց, Կենսագրության  
 համաձայնագրի 18-րդ կառույց, Կենսագրության համաձայնագրի 18-րդ կառույց  
 համաձայնագրի 18-րդ կառույց»  
 Էլեանորա Գրիգորյանը և արդյունավետ գործունեության համար Հայաստանի  
 Հանրապետության բնապահպանության նախարարի խորհրդական Ելանորա  
 Գրիգորյանը պարգևատրվել է Երախտագիտության մեդալով:  
 2017թ. հոկտեմբերի 29  
 Երևան  
 ԼՂ 988 4

**ՀՀ** բնապահպանության նախարարի խորհրդական Ելանորա Գրիգորի Գրիգորյանը պարգևատրվել է Երախտագիտության մեդալով

ՀՀ Նախագահի հրամանագրով երկարամյա բարեխիղճ և արդյունավետ գործունեության համար Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի խորհրդական Ելանորա Գրիգորի Գրիգորյանը պարգևատրվել է Երախտագիտության մեդալով: Ելանորա Գրիգորյանը 2001թ.-ից աշխատում է ՀՀ բնապահպանության նախարարի խորհրդական: Նախարարությունում աշխատելու ժամանակահատվածում, բարեխիղճորեն կատարել է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից վարվող քաղաքականության մասով նախարարի հանձնարարականները, լուծել է գերատեսչության գործառույթներից բխող հիմնախնդիրները: Նա Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված ՄԱԿ-ի ԵՏՀ, Անդրսահմանային ենթատեսչություն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին կոնվենցիայի (ԷՄՊՈ կոնվենցիայի) ազգային համակարգողն է:

ԷՄՊՈ կոնվենցիայի շրջանակներում լինելով իրականացման կոմիտեի անդամ, որտեղ Հայաստանի Հանրապետությունում նոր կառուցվող ատոմակայանի նախագծի վերաբերյալ Ադրբեջանի կողմից բարձրացված բողոքի քննարկման ընթացքում մեծ ջանքեր է ներդրել այդ հարցի չեզոքացման ուղղությամբ:

Լուրջ ներդրում ունի շրջակա միջավայրի ազդեցության գնահատման փորձաքննության բնագավառում օրենսդրական դաշտի կատարելագործման գործում, մասնավորապես, Անդրսահմանային ենթատեսչություն և ռազմավարական էկոլոգիական գնահատման գործընթացում: Մեծ ներդրում ունի միջազգային դոմոր կազմակերպությունների հետ համագործակցելու հարցում: Ակտիվ գործունեություն է իրականացնում Հայաստանի պահպանվող տարածքներում բնապահպանական հիմնախնդիրների լուծմանն ուղղված հարցերում:

**Խրախուսվել են բնադահողանության նախարարության աշխատակիցները**



**ՀՀ** բնապահպանության նախարարության ամանորյա տոնական միջոցառման ժամանակ, որի ընթացքում նախարարն ամփոփել է 2017 թվականին իրականացված աշխատանքները, ձեռքբերումներն ու հաջողությունները, ինչպես նաև արձանագրել՝ բացթողումներն ու նախանշել դրանց լուծումների համար առա-

ջիկա անելիքները: 2017 թվականի ընթացքում բարեխիղճ աշխատանքի, ինչպես նաև բնապահպանության ոլորտում երկարամյա և գնահատելի ներդրում ունենալու համար շնորհակալագրերով և դրամական պարգևներով նախարարության մի խումբ աշխատակիցներ:



Որոնք են լինելու չեխական Dekonta ընկերության Նուբարաժենի ժամկետանց ՊԵՏՏԻՑԻՆԵՐԻ գերեզմանոցի մաքրման երեք հիմնական սարքերակները



ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում տեղի է ունեցել «Ժամկետանց պետսիցիդների պաշարների ոչնչացում և կայուն օրգանական աղտոտիչներով (ԿՕԱ) աղտոտված տարածքների աղտազերծում՝ քիմիկատների անվտանգ կառավարման միջոցառումների շրջանակներում» ՄԱԶԾ-ԳԷՅ լայնածավալ ծրագրի ղեկավար կոմիտեի նիստը: Նիստը նախագահել են ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության տնօրենի տեղակալ Վրեժ Գաբրիելյանը, Հայաստանում ՄԱԶԾ մշտական ներկայացուցչի տեղակալ Դմիտրի Մարիյասինը: Հանդիպման ընթացքում քննարկվել են չեխական Dekonta ընկերության ներկայացրած Նուբարաժենի ժամկետանց պետսիցիդների գերեզմանոցի մաքրման երեք հիմնական տարբերակները: Նիստում ամփոփվել է ծրագրի շրջանակներում 2017թ. կատարված աշխատանքները և նախանշվել են 2018 թ. անելիքները:


Նոր խորագիր.

ստեղծագործական աշխատանքներ բնապահպանական թեմաներով

Մաքուր դաշտերն շրջակա միջավայրը



Չգացել էք ձեզ այնպես ինչպես ձեր տանը



Նախագիծը՝ Արծրուն Պետանյանի  
խմբագիր՝ Մանվել Սևրջյան  
Ձևավորումը՝ Նարինե Բաղդասարյանի  
Նյութերը՝ ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության

Հեռախոս՝  
011 818 517